Հավելված 7
«ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ն «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5»

ք. Ծաղկաձոր «21» մարտ 2024թ.

«Ծաղկաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ն.Հարությունյանի, որը գործում է համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Է.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***«Ծաղկաձոր համայնքի Արտավազ բնակավայրի 3-րդ փողոցի շարունակելի հատվածի կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքներ»***-ը (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն Հավելված N2-ի:

1.4 Կից ներկայացվում է հավաստում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին՝ համաձայն Հավելված N1.1-ի:

1.5 Կից ներկայացվում են պահանջվող լաբորատոր ստուգումները և աշխատանքների կատարման ընթացքում օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետները՝ համաձայն Հավելված N 1.2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 **Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:**

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն

պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **47370000 (քառասունյոթ միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, որից 7895000 (յոթ միլիոն ութ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[1]

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

1) ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած գինն է.

2) ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

---

[1] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

3) ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է՝ գումարային արտահայտությամբ.

4) ՎԳ-ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է,

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[2] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները[3].

N	Խախտումը	Պատասխանատվությունը *
1	Կապալառուն չունի շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.6 տոկոսի չափով
2	Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
3	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
4	Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութը և հողի վերին շերտը չեն տեղափոխվում և պահվում հատուկ նախատեսված վայրերում	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
5	Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
6	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի

[2] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[3] *Եթե գնման առարկան չի հանդիսանում շինարարական ծրագիր 6.5.1 կետը հանվում է պայմանագրի նախագծից, իսկ 1.2 կետից հանվում են «և հաստատված նախագծանախահաշվային » բառերը և 6.4 կետից հանվում է 6.5.1 կետին կատարված հղումը:*

		չափով
7	Հասարակությանն իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
8	Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.6 տոկոսի չափով
9	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
10	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
11	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
12	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
13	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
14	Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
15	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[4]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան	**<<Հրազդանի ՃՇՇՁ>> ԲԲԸ**
ք.Ծաղկաձոր,Օրբելի եղբայրների 9	**Ք. Հրազդան, Շահումյան 342**
ՀՎՀՀ 03027029	**ՀՎՀՀ 03000978**
ՀՀ ՖՆ ԳՎ	**<< Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Հրազդան մ/ճ**
ՀՀ 900122002240	**ՀՀ 163158112553**
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան	**Տնօրեն Է.Բաղդասարյան**
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են կիրառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[4] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Ծաղկաձոր համայնքի Արտավազ բնակավայրի 3-րդ փողոցի շարունակելի հատվածի կապիտալ վերանորոգում՝ ասֆալտապատում

Ծավալաթերթ-նախահաշիվ

No	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Կշիռը (տոկոս)	Քանակը	Միավորի արժեք	Գումար
1	2	3	7	4		
	3-րդ փողոցի շարունակելի հատվածի ասֆալտապատում					
	Հողային աշխատանքներ					
1	գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /II (24a) կարգ	$մ^3$		343.940	0.533	183.325
2	գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /IVp (13) կարգ	$մ^3$		247.170	0.797	196.875
3	գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/կողլիցք /IVp (13) կարգ	$մ^3$		232.800	0.673	156.716
4	գրունտի մշակում բուլդոզերով մինչև 30 մ տեղափոխումով/ լիցք	$մ^3$		232.800	0.712	165.725
5	Գրունտի տեղափոխում 7 կմ լցակույտ/պահեստավորում	տն		1123.109	0.531	596.309
6	Աշխատանք լցակույտում	$մ^3$		591.110	0.061	36.117
7	Գրունտի խտացում և ամրացում թրթռագլդոնով, 6 անցումով 25 սմ շերտի հաստությամբ	$մ^3$		232.800	0.195	45.347
8	Գրունտի ջրում	$մ^3$		232.800	0.389	90.444
	Ընդամենը		**3.11%**			**1470.858**
	Երթևեկելի մաս					
1	Ճանապարհի հիմքի նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով h=5սմ /ГОСТ 23735-79	$մ^3$		83.250	8.750	728.419
2	Խճային հիմքի կառուցում h=15 սմ . ՀՀՇՆ IV 11.05.02-99 կետ 14.57-14.62;	$մ^2$		1665.000	1.824	3037.593
3	Բիտումի տարածում խճային հիմքի վրա 4,12կգ/1քմ	տն		6.86	282.956	1941.077
4	Ծածկի կառուցում մանրահատիկ Բ տիպի ասֆալտբետոնե խառնուրդով h=5 սմ ГОСТ 9128-2013	$մ^2$		1665.000	5.398	8987.398
5	Կողնակների ամրացում ավազակոպճային խառնուրդով h=10 սմ /ГОСТ 23735-79	$մ^2$		666.000	1.005	669.659
	Ընդամենը		**32.43%**			**15364.146**
6	**Իջատեղեր և մուտքեր**					0
7	գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /II (24a) կարգ	$մ^3$		36.960	0.533	19.700

8	գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /IVբ (13) կարգ	մ³		96.340	0.797	76.736
9	գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/կողլիցք /IVբ (13) կարգ	մ³		2.540	0.673	1.710
10	գրունտի մշակում բուլդոզերով մինչև 30 մ տեղափոխումով/ լիցք	մ³		2.540	0.712	1.808
11	Գրունտի տեղափոխում 7 կմ լցակույտ/պահեստավորում	տն		253.270	0.531	134.472
12	Աշխատանք լցակույտում	մ³		133.300	0.061	8.145
13	Գրունտի խտացում և ամրացում թրթրագլդոնով, 6 անցումով 25 սմ շերտի հաստությամբ	մ³		2.540	0.195	0.495
14	Գրունտի ջրում	մ³		2.540	0.389	0.987
15	Ճանապարհի հիմքի նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով h=5սմ /ГОСТ 23735-79	մ³		35.670	8.750	312.104
16	Խճային հիմքի կառուցում h=15 սմ . ՀՀՇՆ IV 11.05.02-99 կետ 14.57-14.62;	մ²		713.300	1.824	1301.330
17	Բիտումի տարածում խճային հիմքի վրա 4,12կգ/1քմ	տն		2.940	282.956	831.890
18	Ծածկի կառուցում մանրահատիկ Բ տիպի ասֆալտբետոնե խառնորդով h=5 սմ ГОСТ 9128-2013	մ²		713.300	5.398	3850.277
	Ընդամենը		**13.81%**			**6539.655**
	<u>3-րդ փողոցի դեպի գերեզմանոց հջատեղի տուֆապատում</u>					0
	Հողային աշխատանքներ					0
1	գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /II (24a) կարգ	մ³		577.960	0.533	308.062
2	գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /IV (6r) կարգ	մ³		247.700	0.797	197.297
3	Գրունտի տեղափոխում 7 կմ լցակույտ/պահեստավորում	տն		1480.404	0.531	786.012
4	Աշխատանք լցակույտում	մ³		779.160	0.061	47.607
5	գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/կողլիցք /IVբ (13) կարգ	մ³		46.500	0.673	31.303
6	գրունտի մշակում բուլդոզերով մինչև 30 մ տեղափոխումով/ լիցք	մ³		46.500	0.712	33.102
7	Գրունտի խտացում և ամրացում թրթրագլդոնով, 6 անցումով 25 սմ շերտի հաստությամբ	մ³		46.500	0.195	9.058
8	Գրունտի ջրում	մ³		46.500	0.389	18.065
	Ընդամենը		**3.02%**			**1430.506**
	Երթևեկելի մաս					0
1	Ճանապարհի հիմքի նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով h=15սմ /ГОСТ 23735-79	մ³		213.000	8.750	1863.702
2	Ցեմենտավազե չոր խառնուրդից հիմքի պատրաստում h=10սմ	մ³		132.477	57.936	7675.214

3	Եզրային գոտիների կառուցում Բ 20 դասի բետոնով 200*300 մմ	$մ^3$		30.750	149.556	4598.849
4	Ճանապարհի սալարկում h=18 սմ տուֆ քարով/Ուջան տուֆ կամ համարժեք որակի	$մ^2$		1324.770	5.268	6979.353
5	լայնական գոտիների կառուցում 180*280 տուֆ քարով Բ 20 դասի բետոնե հիմքով/Ուջան տուֆ կամ համարժեք որակի	100մ		33.800	5.793	195.814
6	Կողնակների ամրացում ավազակոպճային խառնուրդով h=10 սմ /ГОСТ 23735-79	$մ^2$		245.750	1.005	247.100
	Ընդամենը		**45.51%**			**21560.031**
	3-րդ փողոցի շարունակելի հատվածի գծանշում և կահավորում					
1	Ճանապարհային նշանների տեղադրում /առավելության/	հատ		14.000	43.038	602.537
2	Պողպ. ԽողովակD=57x3,5մմ/	գմ		14.00	2.668	37.358
3	Հենայուների երկշերտ յուղաներկում ժանգակայուն ներկով	$մ^2$		2.506	2.324	5.823
4	Ճանապարհի գծանշում ճանապարհային ջերմապլաստիկ լուսանդրադարձնող ներկով 3 մմ հաստությամբ/ սպիտակ գույն/ ըստ ԳՕՍՏ 51256-2011-ի տիպերի/	$մ^2$		25.700	13.972	359.086
	Ընդամենը		**2.12%**			**1004.804**
	Ընդհանուրը		**100.00%**			**47370.000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր,Օրբելի եղբայրների 9

ՀՎՀՀ 03027029
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՀ 900122002240
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Հրազդանի ՃՇՇՁ>> ԲԲԸ
Ք. Հրազդան, Շահումյան 342

ՀՎՀՀ 03000978

<< Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Հրազդան մ/ճ
ՀՀ 163158112553
Տնօրեն Է.Բաղդասարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.1
« 21 » մարտ 2024թ. կնքված
ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5 ծածկագրով պայմանագրի

ՀԱՎԱՍՏՈՒՄ

հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին

«Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն հավաստում է, որ **«ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5»** ծածկագրով կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում իր կողմից տեղադրելու է (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր,Օրբելի եղբայրների 9
ՀՎՀՀ 03027029
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՀ 900122002240
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Հրազդանի ՃՇՇՁ>> ԲԲԸ
Ք. Հրազդան, Շահումյան 342
ՀՎՀՀ 03000978
<< Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Հրազդան մ/ճ
հհ 163158112553
Տնօրեն Է.Բաղդասարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.2
« 21 » մարտ 2024թ. կնքված
ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5 ծածկագրով պայմանագրի

«ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՎԱՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ՝ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»-Ի ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

	Պահանջվող պարտադիր ստուգումներ		
	Աշխատանքի անվանումը	**Չափման միավոր**	**Քանակ**
1	Ա/բ խառնուրդի կազմության ընտրություն (բաղադրատոմս),մանրահատիկ, տիպը	հատ	1
2	Ավազ ա/բ խառնուրդի համար 1000մ3-ից 1 նմուշ	նմուշ	1
3	Խիճ ա/բ խառնուրդի համար 1000մ3-ից 1 նմուշ	նմուշ	1
4	Խիճ հիմքի համար 1500մ3-ից 1 նմուշ	նմուշ	1
5	Ա/բ խառնուրդ ԱԲԳ-ից, մանրահատիկ, ամեն 500տ 1 նմուշ	նմուշ	1
6	Ա/բ խառնուրդ տեղադրված փռված,չխտացված,մանրահատիկ ամեն 500տ 1 նմուշ	նմուշ	1
7	Ա/բ խառնուրդ տեղադրված խտացված կեռային նմուշ(ամեն 7000մ2 համար 1 լրակազմ 3 նմուշ)	լրակազմ	1
8	Հանքային փոշի մանրահատիկ ա/բ-ի համար 200տ-ից 1 անգամ	նմուշ	1
9	Կապակցող նյութ բիտում ա/բ խառնուրդի համար ամեն 50տ 1 նմուշ	նմուշ	1
10	Կապակցող նյութ բիտում հիմքի համար, ամեն 50տ 1 նմուշ	նմուշ	1

«ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՎԱՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ՝ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»-Ի
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

N	Նյութերի տեսակները	Չափման միավոր	Տեխնիկական բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1	Խիճ բազալտե	խմ	Բազալտե խիճ 40-70, 15-20	3 տարի
2	Ավազակոպիճ	խմ	h= 5 սմ	3 տարի
3	Մանրահատիկ ասֆալտբետոն	քմ	Բ տիպի, Նվազագույն հաստությունը 3 սմ	3 տարի
4	Տուֆ քար	քմ	h= 18 սմ, ուջան տուֆ կամ համարժեք որակի	3 տարի
5	Ցեմենտբետոն	խմ	Բետոն Բ 20 դասի	3 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր,Օրբելի եղբայրների 9
ՀՎՀՀ 03027029
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՀ 900122002240
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Հրազդանի ՃՇՇՁ>> ԲԲԸ
Ք. Հրազդան, Շահումյան 342
ՀՎՀՀ 03000978
<< Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Հրազդան մ/ճ
hh 1631581112553
Տնօրեն Ե.Բաղդասարյան

/ստորագրություն/

Հավելված թիվ 2
«21» մարտ 2024թ. կնքված
ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*
«ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՎԱՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ՝ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»-Ի ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	*Հողային և քանդման աշխատանքներ*	*ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից*	*1 ամիս*
2	*Երթևեկելի մասի հիմքի կառուցման աշխատանքներ*		*1 ամիս*
3	*Երթևեկելի մասի ասֆալտապատման աշխատանքներ*		*1 ամիս*
ԸՆԴԱՄԵՆԸ	**«ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՎԱՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ՝ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»**		**3 ամիս**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր,Օրբելի եղբայրների 9
ՀՎՀՀ 03027029
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՀ 900122002240
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Հրազդանի ՃՇՇՁ>> ԲԲԸ
Ք. Հրազդան, Շահումյան 342
ՀՎՀՀ 03000978
<< Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Հրազդան մ/ճ
հհ 163158112553
Տնօրեն Է.Բաղդասարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 21 » մարտ 2024թ. կնքված
ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր,Օրբելի եղբայրների 9
ՀՎՀՀ 03027029
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՀ 900122002240
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Հրազդանի ՃՇՇՁ>> ԲԲԸ
Ք. Հրազդան, Շահումյան 342
ՀՎՀՀ 03000978
<< Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Հրազդան մ/ճ
հհ 163158112553
Տնօրեն Է.Բաղդասարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
Հասցե՝ ՀՀ, ք. Հրազդան, 2301,
Կենտրոն թաղ.Սահմանդր.հր.թ2/3
Հեռ.՝ +374223 21-298
Տեղեկատու՝ 86-86
էլ. փոստ.՝ bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
HRAZDAN BRANCH
Kentron. dis.,Constitution square,dis. 2/3
2301, Hrazdan Republic of Armenia
Tel.: +374223 21-298
Call Center: +3741 08000-8686
E-mail.: bank@aeb.am
www.aeb.am

16315-01.24/39

20.03.2024թ

ԵՐԱՇԽԻՔ

(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Ծաղկաձորի համայնքապետարանի** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **«ՀՐԱԶԴԱՆԻ ՃՇՇՁ» բաց բաժնետիրական ընկերության** (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N **ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5** պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **8,200,000 /ութ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900125003393** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել *այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:*

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N **ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5** ծածկագրով կնքվելիք պայմանագրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ՝ մինչև **20.05.2025թ.**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի tsaghkadzor.tender@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ կառավարիչ՝ **Ա. Վարդանյան**

«ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ Սպասարկման բաժնի պետ՝ **Կ. Երվանդյան**

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
Հասցե՝ ՀՀ, ք. Հրազդան, 2301,
Կենտրոն թաղ.Սահմանդր.հր.թ2/3
Հեռ.՝ +374223 21-298
Տեղեկատու՝ 86-86
էլ. փոստ.՝ bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
HRAZDAN BRANCH
Kentron. dis.,Constitution square,dis. 2/3
2301, Hrazdan Republic of Armenia
Tel.: +374223 21-298
Call Center: +3741 08000-8686
E-mail.: bank@aeb.am
www.aeb.am

16315-01.24/40

20.03.2024թ

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Ծաղկաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«ՀՐԱԶԴԱՆԻ ՃՇՇՁ» բաց բաժնետիրական ընկերության** միջև կնքվելիք N **«ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5»** ծածկագրով պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **5,470,000 /հինգ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900125003393** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիք N «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5» ծածկագրով պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ՝ մինչև **22.05.2028թ**. Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի tsaghkadzor.tender@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **«ԾՔ-ԳՀԱՇՁԲ-24/5»** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ կառավարիչ՝ **Ա. Վարդանյան**

«ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ Սպասարկման բաժնի պետ՝ **Կ. Երվանդյան**